ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/10318/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

12 դեկտեմբերի 2024թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությունը՝ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք հայտը գնման ընթացակարգի /մրցույթի/ պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. դեկտեմբերի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությունը՝ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք հայտը գնման ընթացակարգի /մրցույթի/

պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին:
Դատարանի (դատավոր՝ Ն. Ավետիսյան) 2024թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Որոշումը ստանալուց հետո՝ 2024թ. դեկտեմբերի 7-ին, հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. դեկտեմբերի 9-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. դեկտեմբերի 10-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2024թ. դեկտեմբերի 2-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԴԻԶԻԲԵՅՍ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությունը՝ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք հայտը գնման ընթացակարգի /մրցույթի/ պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2024թ. դեկտեմբերի 2-ին:
Թիվ ԵԴ2/10318/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. հունվարի 20-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2024.12.12 19:47:08 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am